ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

2017-2018 ուստարվա ուսումնական աշխատանքների արդյունքներն ու խնդիրները

(Արձանագրություն. N 31.08.2018թ)

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի ընդլայնված նիստը լսելով և քննարկելով 2017-2018 ուստարվա ուսումնական գործընթացի արդյունքներն ու խնդիրները (զեկուցող՝ Ս.Դավեյան) արձանագրում է, որ համալսարանի գիտական խորհրդի, ռեկտորատի և կրթական բոլոր ստորաբաժանումների աշխատանքներն ուղղված են եղել համալսարանում կրթական գործընթացների պատշաճ իրականացման, կրթական բարեփոխումների խորացման ու ընդլայնման և որակի ապահովման ներհամալսարանական համակարգի զա գացման ուղղություններով:

Վերջին տարիներին համալսարանում մեծ ծավալի աշխատանքներ են տարվում կրթության որակի ապահովման եվրոպական չափանիշների արմատավորման, ինքնավերլուծության ու ինքնագնահատման, մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման, կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային կազմի ապահովման, շարունակական կրթության համակարգի զարգացման, համալսարանի շահակիցների կրթական կարիքների բացահայտման, ուսանողների ու դասախոսների ակադեմիական շարժունության խթանման և իրականացվող գործընթացներում ուսանողների դերի ու ազդեցության բարձրացման ուղղություններով:

Հաշվի առնելով բարձրագույն կրթության զարգացման ներկա միտումները և ագրարային ոլորտի աշխատաշուկայի պահանջները՝ վերջին տարիներին մի շարք մասնագիտություններ խոշորացվեցին, կազմվեցին ու հաստատվեցին երեք նոր կրթական ծրագրեր, արմատապես վերանայվեցին ու բարեփոխվեցին բակալավրային ու մագիստրոսական կրթական ծրագրերի ուսումնական պլանները և համալսարանում իրականացվող բոլոր կրթական ծրագրերի համար կազմվեցին կրթական վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերի փաթեթները:

Համալսարանում աշխատանքներ են տարվում համակարգչային տեխնիկայի թարմացման ու համալրման, համակարգչային լսարանային ցանցի ընդլայնման, էլեկտրոնային ուսուցման համակարգի զարգացման, համալսարանում իրականացվող գործընթացների լուսաբանման, հեռավար ուսուցման կազմակերպման և միասնական տեղեկատվական կայք-էջի ներդրման ուղղություններո]:

Համալսարանը շարունակում է ընդլայնել արտաքին կապերը, ակտիվ աշխատանքներ են տարվում համալսարանի միջազգայնացման ուղղությամբ՝ ընդգրկվելով մի շարք կոնսորցիումներում ու միջազգային գիտական ծրագրերում՝ կնքելով նոր պայմանագրեր ու համագործակցության հուշագրեր:

Այսուհանդերձ, Գիտական խորհուրդը նշում է, որ կրթական գործընթացների կազմակերպման ու իրականացման ոլորտում առկա են լուրջ խնդիրներ ու մարտահրավերներ: Դեռևս շատ անելիքներ կան ուսանողական համակազմի համալրման, որակի ապահովման համակարգի լիարժեք կայացման, կրեդիտային համակարգի ամբողջական կիրառման, ուսանողների գիտելիքների գնահատման արդյունավետ համակարգի ներդրման և ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունավետ կազմակերպման առումներով:

Վերջին տարիներին իրականացված բազմակողմանի և մեծածավալ աշխատանքներով հանդերձ, համալսարանի առջև դեռևս ծառացած են բազմաթիվ խնդիրներ ու մարտահրավերներ:

Ելնելով վերոնշյալից Գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 2017-2018 ուստարվա ուսումնական գործընթացի վերաբերյալ հաշվետվությունը:
2. ***Ուսումնական գործընթացների կազմակերպման և իրականացման արդյունավետության և կրթության որակի բարձրացման նպատակով վերանայել.***

- «Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման» ընթացակարգը,
- «ՀԱԱՀ ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման և գնահատման» կանոնակարգը,

- «Կուրսային նախագծերի (աշխատանքների) հանձնարարման, կազմակերպման, կատարման, պաշտպանության և հետագա պահպանման» ընթացակարգը:

3. *Հանձնարարել ռեկտորի պաշտոնակատար Վ.Ուռուտյանին*

Ձեռնարկել անհրաժեշտ քայլեր առաջիկա ենթակառուցվածքային հավատարմագրման գործընթացը հաստատված ժամանակացույցին համապատասխան պատշաճ մակարդակով կազմակերպելու և իրականացնելու ուղղությամբ:

4. *Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանին, Ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի պաշտոնակատար Մ.Դավեյանին*

4.1 Ուսումնակ·սն տարվա ընթացքում ՏՏ և ԻԾ կենտրոնի, արտաքին կապերի և ագրոբիզնեսի դեպարտամենտի աջակցությամբ ակտիվ համագործակցություն իրականացնել արտերկրի առաջատար բուհերի հետ՝ համատեղ կրթական ծրագրերի իրականացման, լավագույն փորձի փոխանակման,դիպլոմների փոխճանաչման և կրթական նորագույն տեխնոլոգիաների ու ուսուցման ժամանակակից մեթոդների ներմուծման ու ներդրման ուղղությամբ:

4.2 Ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար իրականացնել ուսանողության, դասախոսական կազմի և համալսարանի այլ շահակիցների կրթական կարիքների բացահայտում, արդյունքները ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանը և համապատասխան որոշումների կայացմանը:

5. *Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին և ամբիոնի վարիչներին*

5.1 Մեկ ամսյա ժամկետում աշխատանքներ տանել ամբիոններում դասախոսություններն ինտերակտիվ մեթոդներով անցկացնելու ուղղությամբ, դասախոսությունների ժամանակ բացառելով թելադրությունները:

5.2 Մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը ամփոփել պետական քննական հանձնաժողովների կողմից ներկայացված առաջարկություններն ու եզրակացությունները և ձեռնարկել համապատասխան քայլեր արձանագրված թերություններն ու բացթողումները շտկելու ուղղությամբ:

5.3 Շարունակաբար բարելավել ուսումնաարտադրական և նախադիպլոմային պրակտիկաների և գործնական պարապմունքների կազմակերպման ու

իրականացման որակը՝ զարգացնելով ուսանողների պրակտիկ հմտություններն ու կարողությունները:

5.4 Պրակտիկաների համակարգող Դ.Հայրապետյանի հետ համատեղ մեկ ամսյա ժամկետում մշակել և քննարկման ներկայացնել ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպման ու իրականացման գործընթացների բարելավման համալիր ծրագիր:

6. Հանձնարարել հեռակա ուսուցման դեպարտամենտի պետ Դ. Պետրոսյանին

6.1 Ուժեղացնել թեսթային համակարգի հսկողությունը հեռակա ուսուցման ուսանողների հաճախումների, ստուգողական ու կուրսային աշխատանքների՝ սահմանված կարգով հանձնարարման, կատարման ու պաշտպանության, մեթոդական գրականությամբ ապահովվածության, ինչպես նաև ստուգարքների, քննությունների ու պրակտիկաների անցկացման գործընթացների վրա:

6.2 Պարբերաբար կազմակերպել դասալսումներ, դրանց արդյունքները քննարկել հեռակա ուսուցման դեպարտամենտի գիտական խորհրդում և ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

6.3 2019 թվականից սկսած հեռակա ուսուցման համակարգում ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացն իրականացնել թեսթային համակարգով:

7. Հանձնարարել տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի պաշտոնակատար Վ.Մելքոնյանին

7.1 Համալսարանում ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջական ներդրման համար մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը մշակել աշխատանքային քարտեզ-ժամանակացույց, էլեկտրոնային կառավարման համակարգով աշխատանքների իրականացման կանոնակարգ և ձևավորել հանձնախումբ ու ամրագրել յուրաքանչյուր ստորաբաժանման պատասխանատուներին և նրանց պարտականությունները:

Մինչև ս.թ. հոկտեմբերի 20-ը կազմակերպել դեկանատների բոլոր աշխատակիցների և ամբիոնների անձնակազմերի ուսուցման և վերապատրաստման աշխատանքները:

7.2 Համալսարանի պաշտոնական կայքէջի արդիականացման համար մինչև 2018 թ.նոյեմբերի 20-ը իրականացնել ՀԱԱՀ-ի պաշտոնական կայքէջի նախագծման,

նոր դիզայնի ընտրության և ծրագրավորման, տեղադրման ու տեղեկատվության մուտքագրման աշխատանքները:

7.3 Մինչև ս.թ. հոկտեմբերի 20-ը համալսարանում ավարտել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրման և անձնակազմի ուսուցման աշխատանքները:

7.4 Մեկ ամսյա ժամկետում ամբիոնի վարիչների հետ համատեղ աշխատանքներ տանել դասախոսություններն ինտերակտիվ մեթոդներով անցկացնելու ուղղությամբ՝ համալսարանում ստեղծել դասախոսությունների էլեկտրոնային շտեմարան:

8. **Հանձնարարել ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի պաշտոնակատար Պ. Էֆենդյանին**

Մինչև ս.թ. նոյեմբերի 10-ը իրականացնել ներդրման համակարգերի սերվերների համար նախատեսված տեղի ու պայմանների փոփոխություն՝ նախատեսելով առանձնացված սենյակ՝ ապահովված կայուն ջերմաստիճանով, օդափոխության հնարավորությամբ և էլեկտրաէներգիայի անխափան մատակարարմամբ:

9. **Առաջարկել ուսանողական խորհրդին (Դավիթ Թադևոսյան)**

Ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետների դեկանների ու մասնագիտության համակարգողների հետ համատեղ ուսանողների շրջանում աշխատանքներ տանել ուսանողների հաճախումների բարելավման, նրանց կրթական կարիքների բացահայտման, ուսանողների իրավունքների ու շահերի ներկայացման ու պաշտպանության, ինչպես նաև ուսումնական կարգապահության հաստատման, սանիտարական պատշաճ վիճակի ապահովման և գույքի պահպանման ուղղությամբ:

Գիտ. խորհրդի նախագահ՝ *Վ.ՈՒՌՈՒՏՅԱՆ*

Գիտ. քարտուղար՝ *Դ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ*